UFAR ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Erasmus+

ԷՐԱԶՄՈՒՍ+

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

2024-2025 ՈՒՍՏԱՐԻ

NASA

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՄԱՍՆԱԿՑԵԼ ԷՐԱԶՄՈՒՍ+ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ

ՈՐՏԵՂԻ՞Ց ԿԱՐՈՂ ԵՆՔ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Ո՞Ր ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՈՐՔԱ՞Ն Է ԷՐԱԶՄՈՒՍ+ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ 6

Ի՞ՆՉ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Է ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՒՄ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ԿԱՐԵՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ ԷՐԱԶՄՈՒՍ+ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ“

ԴԻՄԵԼՈՒՑ ՀԵՏՈ...

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՀԱՂԹԱՀԱՐԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Ի՞ՆՉ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ՀՖՀՀ-ԻՑ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ/ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻՑ

Ի՞ՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԵԼ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

ԿԱՐԵՎՈՐ ՀՂՈՒՄՆԵՐ ԺԱՆ ՄՈՒԼԵՆ ԼԻՈՆ 3 ՄԵԿՆՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՄԱՍՆԱԿՑԵԼ ԷՐԱԶՄՈՒՍ+ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ

Էրազմուս+ շարժունության ծրագրերին կարող են մասնակցել Հայաստանում ֆրանսիական համալսարանի (այսուհետ՝ ՀՖՀՀ) այն ուսանողները, աշխատակիցներն ու դասախոսները, որոնք կբավարարեն շարժունության ծրագրերի բոլոր պահանջներին: Ծրագրից, ինչպես նաև ընդունող բուհից կախված՝ պահանջները կարող են տարբեր լինել:

ՈՐՏԵՂԻ՞Ց ԿԱՐՈՂ ԵՆՔ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՖՀՀ միջազգային հարաբերությունների բաժինը գործող ծրագրերի պահանջների, ժամկետների և ընթացակարգերի վերաբերյալ հայտարարություն է տարածում ներքոգրյալ ուղիներով.

- ՀՖՀՀ-ի պաշտոնական կայքէջ՝ **WWW.UFAR.AM**
- Ուսանողներին, աշխատակիցներին և դասախոսներին ուղարկվող էլնամակներ (ՀՖՀՀ-յան էլհասցեներին միայն)
- ՀՖՀՀ սոցիալական՝

Վերոգրյալից զատ՝ տեղեկատվություն կարող եք ստանալ նաև ՀՖՀՀ միջազգային հարաբերությունների բաժին ուղարկելով էլնամակ՝ international@ufar.am

Ո՞Ր ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՖՀՀ-ն կրեդիտային շարժունության ծրագրեր է իրականացնում Եվրոպայի տարբեր երկրների և համալսարանների հետ: Շարժունության ծրագրերի ուղղվածությունը կախված է ընտրված մասնագիտությունից և յուրաքանչյուր ծրագրի առանձնահատկություններից, որոնց համապատասխան էլ ընտրվում է ծրագիրն իրականացնող համալսարանը: Ծրագրերի ուղղվածության և համալսարանների մասին տեղեկություններ կարող եք ստանալ ՀՖՀՀ միջազգային հարաբերությունների բաժնից:



ՀՖՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Բաժնի ղեկավար՝ Գոհար Ղալաչյան
Հեռախոսահամար՝ +37410 203359
Էլհասցե՝ international@ufar.am
Աշխատասենյակ՝ ՀՖՀՀ, 119 աշխատասենյակ

ՈՐՔԱ՞Ն Է ԷՐԱԶՄՈՒՍ+ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի տեսակից կախված՝ տևողությունը

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ 3-12 ԱՄԻՍ Է, ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ՝ 7 ՕՐԻՑ ՄԻՆՉԵՎ 2 ԱՄԻՍ:

Յուրաքանչյուր ծրագիր ունի իրականացման իր հստակ ժամանակահատվածը, որի մանրամասները ներկայացվում են ծրագրին վերաբերող հայտարարության մեջ:

Ի՞ՆՉ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Է ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՒՄ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրերը ֆինանսավորում է Եվրահանձնաժողովը՝ ներառելով ավիատոմսի, կեցության, օրապահիկի ծախսերը:

ԾԱՆՈԹԱՆԱԼ ԱՎԻԱՏՈՄՍԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ



Travel distances (km)	Amount € / participant
100 - 499	180
500 - 1999	275
2000 - 2999	360
3000 - 3999	530
4000 - 7999	820
≥8000	1100

Կեցության համար ամսական տրվում է **750–850 ԵՎՐՈ**՝ կախված ընդունող երկրի համար նախատեսված դրույքաչափերից: Այս գումարից վճարվում են վիզայի, ապահովագրության և ծրագրի իրականացման պահանջներից բխող այլ ծախսեր:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ՝ ԸՍՏ ԸՆԴՈՒՆՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ

ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ՝ ԸՍՏ ԸՆԴՈՒՆՈՂ ԵՐԿՆԵՐԻ

ԿԱՐԵՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

Շարժունության ծրագրերին մասնակցելու համար ուսանողներն ու աշխատակազմի ներկայացուցիչները պետք է տիրապետեն համաեվրոպական լեզուների շրջանակի առնվազն B1 մակարդակին: Յուրաքանչյուր ծրագրի՝ լեզվին առնչվող պահանջը հստակ սահմանվում է հայտարարությունում:

Կան ծրագրեր, որտեղ անհրաժեշտ է գերմաներենի և անգլերենի իմացություն, իսկ կան նաև այնպիսիք, որտեղ պարտադիր պահանջ է ֆրանսերենի իմացությունը: Ծրագրերից և ընդունող համալսարաններից կախված՝ հնարավոր է ներքին քննությունից զատ լեզվի իմացության պաշտոնական վկայականը պարտադիր պահանջ լինի:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրերի շրջանակներում օտարերկրյա բուհում ձեռք բերած կրեդիտները ճանաչվում են ՀՖՀՀ-ում՝ ըստ նախապես համաձայնեցված ուսումնական պլանի: Օտարերկրյա բուհում սովորելիս ուսանողը գնահատվում է ընդունող բուհի գնահատման սանդղակով, որն այնուհետ համապատասխանեցվում է ՀՖՀՀ գնահատման սանդղակին: Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրերի շրջանակներում օտարերկրյա բուհում կիսամյակը չամփոփելու պարագայում վերաքննության ժամանակաշրջանում ՀՖՀՀ ուսանողը հանձնում է ժյուրիի կողմից որոշված բոլոր առարկաները ՀՖՀՀ-ում:

Կարևոր է նաև իմանալ, որ Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրերի շրջանակներում օտարերկրյա բուհում մեկ կիսամյակ ուսանած ՀՖՀՀ ուսանողը **կարող է հավակնել** տվյալ կիսամյակի արդյունքներով իրականացվող առաջադիմության զեղչի մրցույթին, եթե ընդունող համալսարանում ամփոփել է 30 կրեդիտ աշխատածավալը:

ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ ԷՐԱԶՄՈՒՍ+ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ

Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի մասնակցության վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է ներոգրյալ ուղիներով.

- ՀՖՀՀ-ի պաշտոնական կայքէջ՝ **WWW.UFAR.AM**
- Ուսանողներին, աշխատակիցներին և դասախոսներին ուղարկվող էլնամակներ (ՀՖՀՀ-յան էլհասցեներին **միայն**)
- ՀՖՀՀ սոցիարթակներ՝

Հայտարարության հրապարակումից հետո դիմորդը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

- Ինքնակենսագրություն (ըստ եվրոպական Europass ինքնակենսագրության ձևաչափի)
- Ակադեմիական առաջադիմության տեղեկանք[1]
- Մոտիվացիոն նամակ (լեզվի մասին տեղեկատվությունը զետեղված կլինի հայտարարության մեջ)
- Այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության և/կամ ըստ ընդունող բուհի պահանջների

ԾԱՆՈԹԱՆԱԼ ՏԻՊԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

1 Ակադեմիական առաջադիմության տեղեկանքները տրամադրում են ֆակուլտետների վարչական պատասխանատուները (Իրավագիտության ֆակուլտետ՝ Արմինե Կիրակոսյան, Ֆինանսների և Մարքեթինգի ֆակուլտետներ՝ Աննա Բուղդարյան, Կառավարման ֆակուլտետ՝ Անի Արշակյան): Ուշադրություն, տեղեկանքների համար էլդիմումներն անհրաժեշտ է ներկայացնել վերջնաժամկետից առնվազն 5 աշխատանքային օր շուտ՝ այլապես դրանց տրամադրումը երաշխավորվել չի կարող:

ԴԻՄԵԼՈՒՑ ՀԵՏՈ...

Դիմելուց հետո ՀՖՀՀ-ն կազմավորվում է հանձնաժողով՝ ստացված հայտերը գնահատելու և մասնակիցների կարճ ցուցակ (shortlist) կազմելու համար: Կարճ ցուցակ կազմելիս հանձնաժողովն առաջնորդվում է հիմնականում հետևյալ չափանիշներով.

- Բարձր առաջադիմություն
- Մոտիվացիոն նամակ
- Օտար լեզվի բավարար իմացություն
- Վերջին երկու ուստարում ՀՖՀՀ կարգապահական հանձնաժողովի կողմից ստացված պատժամիջոցների բացակայություն
- Հայտը ներկայացնելու պահին ՀՖՀՀ հանդեպ ուսման վարձավճարների նկատմամբ պարտքի բացակայություն
- Առանձին դեպքերում կարող են սահմանվել հավելյալ կամ այլ չափանիշներ՝ այդ թվում նաև գործընկեր բուհի պահանջով:

Կարճ ցուցակում ընդգրկված ուսանողները հրավիրվում եմ հարցազրույցի: Հարցազրույցը հաղթահարած ուսանողների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ուղարկվում է ընդունող համալսարան: Ծրագրից կախված՝ հնարավոր է, որ դիմորդների ընդունելության վերաբերյալ վերջնական որոշումը կայացնի ընդունող համալսարանը: Մինչ շարժունության մեկնելն ուսանողները պետք է ստորագրեն տիպային համաձայնագիր, որի օրինակին կարող են ծանոթանալ ստորև հղումով (համաձայնագրի դրույթները ենթակա են փոփոխության):

ԾԱՆՈԹԱՆԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԻՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՀԱՂԹԱՀԱՐԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Մինչև շարժունության ծրագրին մասնակցելը դիմորդը պետք է լրացնի ուսումնառության և/կամ դրամաշնորհների համաձայնագրերը, որոնց ձևանմուշների վերաբերյալ տեղեկատվությունը դիմորդներին է փոխանցվում ՀՖՀՀ միջազգային հարաբերությունների բաժնի կողմից: Ուղարկող և ընդունող համալսարանները ուսումնառության համաձայնագիրը պետք է նախապես լրացնեն և համաձայնեցնեն միմյանց հետ: Որոշ եվրոպական համալսարաններ պահանջում են նաև առցանց դիմումի լրացում, որն անհրաժեշտ է մինչև մեկնելը իրականացնել սահմանված ժամկետներում:

Որպես Էրազմուս+ ուսանողներ, դիմորդները ազատվում են ընդունող բուհում ուսման, գրանցման, քննությունների, լաբորատորիաներից կամ գրադարաններից օգտվելու վճարներից: Փոքր վճարներ կարող են գանձվել ապահովագրության կամ ուսանողական միություններին անդամակցելու համար:



Ի՞ՆՉ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ՀՖՀՀ-ԻՑ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ/ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻՑ

ՀՖՀՀ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ՝

- Աջակցում է ուսումնառության համաձայնագիրը լրացնելու գործընթացում
- Հաստատում է շարժունությանը մասնակցող ուսանողի կողմից ընտրված առարկաների ցանկը
- Հաստատում է շարժունության ընթացքում տեղ գտած փոփոխությունները

ՀՖՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆԸ՝

- Կազմակերպում է հանդիպումներ՝ ծրագրի մանրամասներին ծանոթացնելու համար:
- Աջակցում է վիզայի փաստաթղթերը լրացնելիս:
  Ուշադրություն.
  վիզայի համար օր վերցնելու, փաստաթղթերը ժամանակին լրացնելու, փաստաթղթերի փաթեթը հավաքագրելու և մուտքի արտոնագրի ստացմանը վերբերող բոլոր գործընթացների համար պատասխանատու է ուսանողը:
- Աջակցում է ուսումնառության համաձայնագիրը լրացնելու ընթացքում:
- Ըստ ծրագրի առանձնահատկության՝ տրամադրում է այլ տեղեկատվություն:

ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԸ՝

- Տրամադրում է համալսարանում ուսումնառելու հրավեր-նամակ:
- Աջակցում է ընդունող երկրում կացության հարցերը կարգավորելու գործընթացում:
- Տրամադրում է տեղեկատվություն՝ համալսարանում ուսումնառելու վերաբերյալ:
- Համապատասխան միջոցառումներ է կազմակերպում ուսանողների ինտեգրման համար:

Ի՞ՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԵԼ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՊԵՏՔ Է.

- ներկայացնեն ուսման ավարտը և ձեռքբերումները հաստատող փաստաթուղթը (transcript of records),
- ՀՖՀՀ-ում լրացնեն ՀՖՀՀ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի ուսանող-մասնակիցների հարցումը, որը մասնակիցներին է ուղարկվում ՀՖՀՀ միջազգային հարաբերությունների բաժնի կողմից: Հարցումը լրացնելը պարտադիր է բոլոր մասնակիցների համար: Հարցման մանրամասներին կարող եք ծանոթանալ «ՀՖՀՀ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի ուսանող-մասնակիցների հարցման ընթացակարգը» հաստատող հրամանում:

ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ.

- հաշվետվություն՝ օտարերկրյա բուհում իրականացրած ծրագրի, հետագա համագործակցության, ձեռք բերված պայմանավորվածությունների, առաջիկայում նախատեսված անելիքների վերաբերյալ:

ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՓՈԽՃԱՆԱՉՈՒՄ

ՀՖՀՀ բոլոր կրթական աստիճաններում ուսանողը կիսամյակն ամփոփելու համար պետք է կուտակի 30 կրեդիտ, ունենա համապատասխան ՄՈԳ, ինչպես նաև բավարարի ՀՖՀՀ կանոնակարգերում ամրագրված պահանջներին: Նույնը վերաբերելի է նաև նաև Էրազմուս + Կրեդիտների միջազգային շարժունության ծրագրերին մասնակցող ուսանողներին:

Նախքան արտերկիր մեկնելը ուսանողն իր դեկանի և ուսումնական գծով տնօրենի հետ համաձայնեցնում և հաստատում է այն առարկայացանկը, որը վերջինս ուսումնասիրելու է արտասահմանյան բուհում: Ընտրված առարկաները պետք է արտացոլվեն նաև Learning Agreement-ում: Սա թույլ կտա առանց խոչընդոտների կրեդիտների փոխճանաչում իրականացնել ՀՖՀՀ վերադարձից հետո: Ուսումնական գծով տնօրենը պատասխանատու է կրեդիտների ճանաչման գործընթացի համար:

Ոչ ֆրանսիական բուհերում կրեդիտների միջազգայի շարժունության ծրագրի շրջանակում սովորող ուսանողների գնահատականների փոխճանաչումը տեղը է ունենում ըստ Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի սկզբունքների:

ԿԱՐԵՎՈՐ ՀՂՈՒՄՆԵՐ ԺԱՆ ՄՈՒԼԵՆ ԼԻՈՆ 3 ՄԵԿՆՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ



ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ[2]



2 Թարմացված տարբերակը Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանը կտեղադրի կայքում հընթացս:

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԿԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ



photo credits : unsplash, wikimedia

UFAR

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

+374 10 24 96 47
info@ufar.am
WWW.UFAR.AM